

**Ածականացումը, մակբայացումը հայերենում և անգլերենում
(հայերենը՝ ըստ միջին հայերենի բացատրական բառարանի՝
ածական/մակբայ արձանագրված բառերի, անգլերենը՝ ըստ
գեղարվեստական տարբեր երկերի)**

*Թերեզա Շահվերդյան
Մանանա Դալայան*

*Հանգուցային բառեր. միջին հայերեն, թեքականություն, հատկա-
նշային խոսքի մասեր, խոսքամասյին փոխանցումներ, նմանություններ,
տարբերություններ, մակբայական ածական, ածականական մակբայ*

Նախաբան

Թեև թե՛ ածականը, թե՛ մակբայը հատկանիշ ցույց տվող խոսքի մասեր են, սակայն նրանց գլխավոր տարբերությունը թեքականության մեջ է: Հատկանիշ ցույց տվող այլ խոսքի մասերը կարող են խոսքիմասային անցում կատարել, և կարող է տեղի ունենալ ածականացում կամ մակբայացում: Այդ երևույթը հատուկ է թե՛ հայերենին, թե՛ անգլերենին:

Հին (450-1100 թթ.), միջին (1100-1450 թթ.) և ժամանակակից (1500 թ.-ից մինչև մեր օրերը) անգլերենի պատմական զարգացման շրջանում ևս ածականն ու մակբայը ունեցել են թե՛ նմանություններ, թե՛ տարբերություններ լեզվի՝ խոսքիմաստային դրսևորումների բոլոր մակարդակներում:

Խոսքամասային փոխանցումները՝ երկու լեզուների հանդիպադրությամբ

Ածականը գրաբարում հոլովվում է իր բուն նշանակությամբ. այդ հատկանիշը ժառանգել է հնդեվրոպական մայր լեզվից, ինչպես ցեղակից լեզուները, սակայն երբեմն այդ օրենքը խախտվել է բազմավանկ ածականների՝ որոշյալից առաջ գործածության դեպքում: Ածականը դերանունների պես հոլովման յուրահատուկ տեսակ չի զանազանում, այլ հոլովվում է անվանական հոլովմամբ՝ գոյականի ձևախմբման տարբերակով (*այգի, բարի*)՝ ո-ա խառն հոլովում, *մեղր, բարձր*-ու պարզ հոլովում): Հետագայում՝ միջին հայերենից սկսած, այլևս չի գործում որոշիչ-որոշյալի համաձայնությունը, և ածականը չի հոլովվում իր բուն նշանակությամբ:

Հին անգլերենում ածականը հոլովվել է: Ի տարբերություն գոյականի՝ ածականի հոլովումը եղել է ոչ միայն ձևային (formal), այլև իմաստային (semantic), այն գոյականի նման չի պատկանել այս կամ այն հոլովման:

Հաճախ ածականները պատկանել են երկու հոլովման՝ թույլ և ուժեղ: Որպես կանոն թույլ հոլովման են պատկանել *r, n*, արմատով ածականները, որոնց նախորդել են կա՛մ ցուցական դերանունները, կա՛մ սեռական հոլովով դրված անձնական դերանունները: Այս հոլովումը ստացել է «որոշակիության» իմաստ: Ուժեղ հոլովման՝ *a, i, u*, արմատ ունեցող ածականները: Գոյականի նման ածականները ունեցել են երեք սեռ, երկու թիվ և հինգ հոլով: Ածականը ունեցել է համեմատության աստիճաններ

soft (փափուկ) – soft**ra** (ավելի փափուկ) – soft**est** (ամենափափուկ)

heard (բարդ) – heard**ra** (ավելի բարդ) – heard**ost** (ամենաբարդ):

Միջին և ժամանակակից անգլերենի շրջանում ածականը պահպանեց համեմատության աստիճանները՝ կորցնելով վերջավորությունները, և՛ եզակի և՛ հոգնակի թվով հոլովվելու տարբերությունները:

Եզ. թ., ուժեղ հոլովման ածական – blind

Հոգն. թ., ուժեղ հոլովման ածական – blinde**e**

Եզ. թ., թույլ հոլովման ածական – blinde

Հոգն. թ., թույլ հոլովման ածական – blinde**e**

14-րդ դարում **e** վերջավորությունը աստիճանաբար սկսեց կարդացվել **ə**-ը և հետագայում վերացավ: (Galstyan A., Paronyan Sh., 2013, p. 168-173):

Անգլերենի մակբայները պատմական զարգացման շրջանում նույնպես ենթարկվել են փոփոխությունների: Much/more/, շատ/, numerous (բազմաթիվ) մակբայները համարվում են երկրորդական, քանի որ սերվել են հայցական հոլովով դրված գոյականներից կամ ածականներից: neāh (մոտ) – nearly (մոտավորապես): Հին անգլերենի մակբայների տարբերակիչ վերջավորություններն էին – **um, es**.

Օրինակ՝ hwilum/sometimes (երբեմն)

Մակբայը կազմվում էր ածականից՝ ավելացնելով **e** վերջավորություն/ hearde բարդ կերպով, nearwe /narrowly/ նեղ /կերպով/: Նրանք կազմվում էին նաև lice/ like-նման ածանցով (Baugh, 1978, p. 179)-deopliche (խորը) – deplīche (խորապես)

Մակբայն ածականի նման ունեցել է համեմատության աստիճաններ Wel/! – bet – bet/e/st /լավ, ավելի լավ, ամենալավ.

Միջին անգլերենի lice/ like – նման ածանցը վերափոխվեց ժամանակակից անգլերենի **ly** մակբայակերտ ածանցի: Շատ դեպքերում, **ly** ածանցը միանալով ածականին ամբողջովին փոխում է նրա իմաստը: (Alexander L., 1996, p. 138) Ինչպես ժամանակակից անգլերենի ածականը,

այնպես էլ մակրայը ունեն համեմատության կանոնակարգված / **er - est**, համեմատական և **more, most** գերադրական աստիճան: Միավանկ ածականների ու մակրայների դեպքում գործածվում է **er - est** ածանցը.

More- most, ածանցները գործածվում են երկու և ավել վանկ ունեցող ածականներն ու մակրայները/: Միավանկ ածականի կամ մակրայի դեպքում ունենք հետևյալ պատկերը.

Ածական – Clever – clever**er** – the clever**est** (խելացի)

Մակրայ fast – fast**er** –the fast**est** /արագ/որեն/

Բազմավանկ ածականի/մակրայի դեպքում հետևյալ պատկերը՝

Ածական beautiful – **more** beautiful – **the most** beautiful (գեղեցիկ)

Մակրայ – beautiful**ly** –**more** beautiful**ly** – **the most** beautiful**ly** (գեղեցիկ կերպով)

Ածականի ու մակրայի երկուական օրինակ անկանոն կազմությունից /բացառություններից

Ածական – **good** –better – the best (լավ)

Մակրայ – **well** – better-the best (լավ)

Ածական bad – worse – the worst (վատ)

Մակրայ bad**ly** – worse – the worst (վատ)

Ածական – մակրայ անկանոնությունը չի սահմանափակվում համեմատության աստիճանով միայն: Իմաստաբանական առումով ևս նկատելի են փոփոխություններ, որոնք դարձել են ժամանակակից անգլերենի քերականության բաղկացուցիչ մաս: Կան ածականներ, որոնք ստանում են **ly** մակրայակերտ ածանցը, վերափոխվում, դառնում են մակրայ և փոխում իմաստը: Օրինակ՝

Ածական Մակրայ

hard – բարդ hardly – հազիվ թե

near – մոտ nearly – համարյա, մոտավորապես

short – կարճ shortly – շուտով

close – մոտ closely – ուշադիր

late – ուշ lately – վերջերս

high – բարձր highly – մեծապես

fine – հիանալի finely – ամենայն մանրամասնությամբ

most – շատ mostly – մեծապեսwide – լայն widely – մեծապես, շատ

Ժամանակակից անգլերենի ածականը դրվում է գոյականից առաջ black card /սև քարտ, ածական + գոյական / ի տարբերություն ֆրանսերենի / carte noire/ սև քարտ, գոյական + ածական/: Նախադասության մեջ սովորաբար պահպանում է իր դիրքը՝ գոյականից առաջ:

She is **beautiful**. – Նա/աղջիկը/ գեղեցիկ է:

Սակայն լինում են դեպքեր, երբ ածականը դրվում է նախադասության սկզբնամասում: Այս երևույթը ավելի շատ կարելի է դիտարկել որպես շրջուն շարադասություն ունեցող կառույց, ոճական հնար՝ ինվերսիա /inversion/: Այս միջոցն օգտագործվում է խոսքին է՛լ ավելի մեծ արտահայտչականություն հաղորդելու և ասելիքը ավելի ազդեցիկ ու տպավորիչ դարձնելու նպատակով: **Beautiful** is she. (Գեղեցիկ է նա/աղջիկը):

Ժամանակակից անգլերենի մակբայի տեղը նախադասության մեջ փոփոխական է:

Մովորաբար նրանք լրացնում են բային, դրվում են բայից հետո՝ նախադասության վերջնամասում:

She speaks **beautifully**. Նա գեղեցիկ / կերպով / է խոսում:

Կան մակբայներ, որոնք լրացնում են ածականին և դրվում են նրանից առաջ.

very good, awfully hungry – շատ լավ, ահավոր քաղցած:

Մակբայները անգլերենում կարող են լրացնել նաև մեկ այլ մակբայի՝ **very soon, awfully quickly** – շատ շուտ, ահավոր/ շատ արագ: Նրանք լրացնում են նաև գոյականին.

The child **over there** is my son. – **Այնտեղ/այն կողմում** կանգնած երեխան իմ տղան է:

Ձևի մակբայները սովորաբար դրվում են տեղի և ժամանակի մակբայներից առաջ:

She read **quietly** /manner/ **in the library** /place /**all afternoon./time/**

Ամբողջ ցերեկը /ժամանակի մակբայ/ նա **հանդարտորեն/ ձևի մակբայ/** կարդում **էր գրադարանում /տեղի մակբայ/:**

Ինչպես երևում է նշված օրինակից, հայերենում դիրքային փոփոխություններ են նկատվում նախադասության մեջ մակբայների տեղակայման առումով:

Ժամանակի մակբայները / afterwards, eventually, lately, now, recently, soon, then, today/ ժամանակակից անգլերենում կարող են դրվել կամ նախադասության սկզբնամասում կամ վերջնամասում.

Eventually they came / They came **eventually** – Նրանք **վերջապես** եկան:

Չայերենում նրանց տեղը նախադասության մեջ կարող է լինել փոփոխական՝ սկզբնամասում, միջնամասում, վերջնամասում:

Չաճախականություն ցույց տվող մակբայները/ always, continually, frequently, usually, sometimes, repeatedly, hardly, ever, never/ դրվում են ենթակայի և ստորոգյալի միջնամասում:

He usually / sometimes/ stays up all night.

Նա սովորաբար/երբեմն/ մնում է արթուն մինչև ուշ գիշեր:

Մակրայերի և ածականների վերլուծությունը կարելի տարբեր կողմերից ու դիրքերից քննարկել, մենք, սակայն, թիրախավորել ենք այս հարցին առնչվող հիմնական և սկզբունքային կետերը լեզվի պատմական տարածամակյա զարգացման ընթացքում [6, 122-138; 7, 179; 8, 168-173; 9, 77-79]:

Ե՛վ հայերենում, և՛ անգլերենում լեզվի պատմության բոլոր շրջաններում ածականը ունեցել է համեմատության աստիճաններ. իհարկե դրանք բազմաթիվ փոփոխությունների են ենթարկվել:

Միջին հայերենի բացատրական բառանարում ընդգրկված բառույթների քննությամբ զբաղվել ենք տարբեր հոդվածներում: Վերջերս տպագրության ենք ներկայացրել «Միջինհայերենյան ածականների և մակրայների համեմատական վերլուծություն» հեղվածը, որտեղ քննել ենք նաև այն բառերը, որոնք ընդգրկված են Հայկազյան բառարանում: Միջինհայերենյան բառարանում՝ որպես ածական/մակրայ հիշարակված են 226 բառերից շուրջ 90-ը կան նաև «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում (դրանք շեղագիր, նշվածներն են): Դրանց մի մասը «Աստվածաշնչից» է, մի մասն էլ միջին հայերենին է անցել ավելի ուշ գրաբարի ետդասական շրջանից:

ԱԶՈՒԱՆԱՌՆ՝, ա. մ., **ԱԺԱՆ**, ա. մ., **ԱՂԾՐԻ**, ա. մ., **ԱՆԱՂԵՐՄ**, ա. մ., **ԱՆԱՍՊԱՐ**, ա. մ., **ԱՆԲԵԿԱՐ**, ա. մ., **ԱՆԳԻՆԻ**, ա. մ., **ԱՆԳՈՒՄԱՆ**, ա. մ., **ԱՆԳՈՒՊԱՐ**, ա. մ., **ԱՆԳՕՏԻ**, ա. մ., **ԱՆԵՐԵԻ**, ա. մ., **ԱՆԺԱԺ**, ա. մ., **ԱՆԼԻՊԱԷՍ**, ա. մ., **ԱՆԽԱՆՁ**, ա. մ., **ԱՆԽԱՆՈՒՐ**, ա. մ., **ԱՆԿԱՀ**, ա. մ., **ԱՆԿԱՍՄԱՅ**, ա. մ., **ԱՆՀԱՆ**, ա. մ., **ԱՆՀԱՍԻՄԱՂ**, ա. մ., **ԱՆՁԷԹ**, ա. մ., **ԱՆՁՐԵԻԻՀԱՐ**, ա. մ., **ԱՆՄԱԶ**, ա. մ., **ԱՆՄԱԽԱՂ**, ա. մ., **ԱՆՇՆՈՐՀՔ**, ա. մ., **ԱՆՉՈՒՄԱՆ**, ա. մ., **ԱՆՊԱՊ**, ա. մ., **ԱՆՊԱՏԱՆ**, ա. մ., **ԱՆՊԱՐՈՆ**, ա. մ., **ԱՆՊՈՉ**, ա. մ., **ԱՆՄԻՆ**, ա. մ., **ԱՆՍԼԵՀ**, ա. մ., **ԱՆՎԱԽՇ**, ա. մ., **ԱՆՎԱՐՏԻ**, ա. մ., **ԱՆՎՃԻՌ**, ա. մ., **ԱՆՎՆԱՍՍԱԿԱՆ**, ա. մ., **ԱՆՎՐԻՊԱԿ**, ա. մ., **ԱՆՏԷՐ**, ա. մ., **ԱՆՏԻԱԹԻԿ**, ա. մ., **ԱՆՓԱԼԱՆ** (պարս.), ա. մ., **ԱՆՓԵՏՈՒՐ**, ա. մ., **ԱՆՓՈՒՇ**, **ԱՇՔԱՐԱՅ** (պարս.) ա. մ., **ԱՊԱՍՈՐԹ**, ա. մ., **ԱՊԼԱՀ** (արաբ.), ա. մ., **ԱՍՏՂԱԿԱՃԱՌ**, ա. մ., **ԱՐԱՊԵՐԷՆ** (ԱՐԱՊԿԵՐԷՆ), ա. մ., **Արեւանման**, ա. մ., **ԱՐԹՈՅՆ**, ա. մ., **ԱՐՏԱՄԻԱԼԻ**, ա. մ., **ԱՓԱՉԱՓ**, ա. մ., **ԱՓՍՈՍԱԼԻ**, ա. մ., **ԲԱՂՆԵԼՈՒԱՅ**, ա. մ., **ԲԱՐՉՐԱԲԱՉՈՒԿ**, ա. մ., **ԲԱՐՉՐԱՌԱՍՏԱՂ**, ա. մ., **ԲԼՐԱԿԵՐՊ**,

¹ Օրինակներն ու համառոտագրություններն ըստ Միջին հայերենի բառարանների:

ա. մ., ԲՈԼՈՐԿԵԿ, ա. մ., ԲՈԿԻԿ, ա. մ., ԳԱՅԼԱՊԱՍԱՌ, ա. մ., ԳԻՆՈՎ, ա. մ., ԳՆԴՂՈՒԿ, ա. մ., ԳՈՅ, ա. մ., ԳՕՏԵԼՈՅԾ, ա. մ., ԴԺԱՐ, ա. մ., ԴՐՈՒՑԱՀԱՅԵԱՑ, ա. մ., ԵՐԱԿԱԶԵԻ, ա. մ., ԶԱՐՀՈՒՐԱԳԻՆ, ա. մ., ԸՂԶԱԼԻՑ, ա. մ., ԹԱԺԱԹԱԺԱՀԹԱԺԱՅ (պարս.), ա. մ., ԹԱՄԱՄ (արաբ.), ա. մ., ԹԱՄԻԶ (պրսկ.), ա. մ., ԹԱՐԱՆԽԱՌՆ, ա. մ., ԹԱՐՊԵՂ (պրսկ., արաբ.), ա. մ., ԹԱԻԱԼԱԿ, ա. մ., ԹԱՓՕՐ, ա. մ., ԹԵՐԱԿ, ա. մ., ԹԵՐԱՏ, ա. մ., ԹԵՐԽՈՐՈՎ, ա. մ., ԹԵՐՆՄԱՇ, ա. մ., ԹԵՒԱԹԱՓ, ա. մ., ԹԸԽԱԾ, ա. մ., ԹՈՒՐՔԵՐԷՆ, ա. մ., ԺՐԱՊԷՍ, ա. մ., ԻԼԱԽԵՐԷՆ, ա. մ., Ի ԼՄԱՆ. ա. մ., ԻՄԱՍՏՆԱԶԵԻ, ա. մ., Ի ՓԱԿՄԱՆ, ա. մ., Ի ՔԱՇ, ա. մ., ԼԱԼԱԿԱՆ, ա. մ., գր.-ուս՝ գ. Լալազին, ԼԱԼԻ, ա. մ., ԼԱՅԵԽ/ԼԱՅԵՂ (արաբ., պրսկ.), ա. մ., ԼԻԱԼԻՐ, ա. մ., ԼԻՔՆ, ա. մ., ԼՈՒՍԱՀՈՍԱՆ, ա. մ., ԽԱԶ ԽԱԶ, ա. մ., ԽԱՓԱՆՀԵՐԿ, ա. մ., ԽՈԼՈՌ/ԽՈԼՈՐ, ա. մ., ԽՈՍՏԱԻ, ա. մ., ԽՈՐՈՒ, ա. մ., ԽՈՐՈՒԿ, ա. մ., ԽՈՑԱԼԻՑ, ա. մ., ԽՈՒՐՏ ՈՒ ՄՈՒՐՏ, ա. մ., ԽՊԱՆ, ա. մ., ԽՌՈՒԱԳՈՅՆ, ա. մ., ԽՕՇ (պրսկ.), ա. մ., ԾԱՄԱԿՏՈՒՐ, ա. մ., ԾԱՅՐԱՍՈՒՐ, ա. մ., ԾԱՆԴ, ա. մ., ԾԱՆՏ, ա. մ., ԾՆՈՂԱՆՄԱՆ, ա. մ., ԾՈՒՌՈՒՄՈՒՌ/ԾՈՒՌ ՈՒ ՄՈՒՌ, ա. մ., ԾՎԷՆ ԾՎԷՆ, ա. մ., ԿԱՄԱՏ(Ք), ա. մ., ԿԱՄԿԱՐԳԱՑ, ա. մ., ԿԱՐՃԱՅԺԱՄԱՆԱԿ, ա. մ., ԿԻՊ, ա. մ., ԼԿԻՍԱՀԻՄԱՆԴ, ա. մ., ԿԻՍՄԱՔՈՒՐ, ա. մ., ԿԻՍԱԻԷՐ, ա. մ., ԿՈՂՄԱՒՈՐ, ա. մ., ԿՈՒՇՏ, ա. մ., ԿՈՒՊՂ, ա. մ., ԿՊՐԱՏԵՍԱԿ, ա. մ., ԿՈՌԻՆՁ, ա. մ., ԿՄԿԾԱԳԻՆ, ա. մ., ԿՑԻԿ, ա. մ., ՀԱԿԱՌ, ա. մ., ՀԱՆԳԻՏԱՊԷՍ, ա. մ., ՀԱՆԴԱՐՏ, ա. մ., ՀԱՌԱԶԱԳԻՆ, ա. մ., ՀԱՐԻՒՐԱՊԱՐԳԵԻ, ա. մ., ՀԱԻԱՔ, ա. մ., ՀԱԻՄԱՐ, ա. մ., ՀԵԶԱՇԱՐԺ, ա. մ., ՀԵԶՈՒԿ, ա. մ., ՀԵԾԱԾԱԳԻՆ, ա. մ., ՀՈՌՄԵՐԷՆ, ա. մ., ՀՈՔՎՅՆՈՐ, ա. մ., ԶԱԳԱՆԱՌՆԵԱԼ, ա. մ., ԶԱԳՈՒԶՈՒ, ա. մ., ԶԻԱՊՈՒՐ, ա. մ., ՂԵՂԱՆ, ա. մ., ՂՈՐՂ, ա. մ., ՃԵՂՔ ՃԵՂՔ, ա. մ., ՃԵՆՃԵՐԱԼԻ, ա. մ., ՄԱՆԷՄԱՆ, ա. մ., ՄԱՆՏՐՏԻԿ, ա. մ., ՄԱՌԱՆԼԱԴԱՏ, ա. մ., ՄԱՐԳԱՐՏՕՐԷՆ, ա. մ., ՄԱՐՄՆԱԶԱՐԶԱՐ, ա. մ., ՄԵՆԱԿԱՆ, ա. մ., ՄԵՐԿԻԿ, ա. մ., ՄԹՎԻՆ, ա. մ., ՄԻԱԳՈՒՄԱՐ, ա. մ., ՄԻԱԴԵՀ, ա. մ., ՄԻԱԶԱՔ, ա. մ., ՄԻԱՅԵՂ, ա. մ., ՄՇԻՆՋԵՆԱՒՈՐ, ա. մ., ՄՈՒՐԱԹԱԻԱԼ, ա. մ., ՄՈՎՍԷՍԱՐԱՐ, ա. մ., (եկեղեց), ՄՈՐՈՒՄԽԱՌՆ, ա. մ., ՄՈՒՖՏԱ (արաբ.) ա. մ., ՅԱՄԵՐԱՄՍ, ա. մ., ՅԱՆԴԳՆԱԿԱՆ, ա. մ., ՅԵՄ, ա. մ., ՇԱՆ ՇԱՆ (պրսկ., ճյուղ) ա. մ., ՇԵՐՏ ՈՒ ՓԵՐԹ, ա. մ., ՇԻՏԱԿ, ա. մ., ՇՆՄԱՏԱԿ, ա. մ., ՇՈՂՀԱՐ, ա. մ., ՇՈՂ ՇՈՂ, մ. ա., ՈՂՈՐՄՈՒԿ, ա. մ., ՈՐՍՂ ՈՐՍՂ, ա. մ., ՈՒԺԸՆԴԱԿ, ա. մ., ՈՒԺՈՎ, ա. մ., ՈՒԺՈՎԿԵԿ, ա. մ., ՈՒՂԵՂ, ա. մ., ՈՒՂՈՒՐ (պրսկ. թուրք), ա. մ., ՈՒՂՈՒՐԴ, ա. մ., ՈՒՇԱԹԱՓ, ա. մ., ԶԱՐՏՄԱՂԻԿ, ա. մ., ԶՈՐԵՔՊԱՏԻ, ա. մ., ԶՈՐՄՈՏԵՐ, ա. մ., ՊԱԼԱՇ (արաբ.), ա. մ.,

ՊԱՂԱՏԱԳԻՆ, ա. մ., ՊԱՌԱԿ, ա. մ., ՊԱՏՐԱՍՏԻԿ, ա. մ., ՊԱՐԱՊԱ Ը (պրսկ.), ա. մ., ՊԱՐԶԵՐԵՍ, ա. մ., ՊԷՆ ՈՒ ՊԷՆ, ա. մ., ՊԷՆՈՒՄԷՏ, բեռումետ (պրսկ.), ա. մ., ՊԷՎԱԽՏ (պրսկ.) ա. մ., ՍՍԼԱՐ, ա. մ., ՍՍԿԱԻՄԲԱՆ, ա. մ., ՍՍԲԱԿԱԾ, ա. մ., ՍՈՒՏՈՒՍՈՒՏ, ա. մ., ՍՊՐԿԻԿ, ա. մ., ՍՏՈՅՔ (գրբ. ստոյգ), ա. մ., ՍՏՈՒԳ (գրբ., ստոյգ), ա. մ., ՍՐԱԽՈՅ, ա. մ., ՍՐՏՈՎ, 1. Ա, ՎՏԱԿՕՐԷՆ, մ. ա., ՏԱԿ ՏԱԿ/ ՏԱԿՏԱԿ, մ. ա., ՏԱՃԿԵՐԷՆ, ա. մ., ՏՐԱԲԱՆ, ա. մ., ՏՔՈՒՆ, ա. մ. ՅԵՂՈՒՅԵՂ/ ՅԵՂ ՈՒ ՅԵՂ, ա. մ., ՅԵՂՔ Ի ՅԵՂԱՅ, ա. մ., ՅՐՏԱՍՍԱՌՈՅՅ, ա. մ., ՓԱՐՄԻ, (պրսկ.): ա. մ., ՓՆՏՈՐ, ա. մ., ՔԱՂՅԱԾ, ա. մ., ՔԱՂՅՐԱԳԻՆ, ա. մ., ՔԱՄ (պրսկ.), ա. մ., ՔԸՄՆՀԱՆ, ա. մ., ՔԻԹ, ա. մ., ՔՉԻԿ, ա. մ., ՕՉԱՆՄԱՆ, ա. մ.:

Քանի որ այլ հոդվածում մանրամասն քննել ենք բառապաշարի այդ շերտը, ուստի այժմ կներկայացնենք այն բառերը, որոնք միջին հայերենից անցել են հայոց լեզվի արդի շրջանին՝ հնչյունափոխված կամ անհնչյունափոխված տարբերակներով²: Մակայն հիշատակված բառարաններում նույն բառի խոսքամասային պատկանելությունը միանման չեն դիտարկել գրեթե միաժամանակ հրատարակված (անցյալ դարի 60-70-ական թվականներ) բառարանների հեղինակները: Երկու աղբյուրներում էլ կան սահմանափակ թվով բառեր, որոնք միայն որպես ածական են ընդունել: Մակբայի շարահյուսական պաշտոն կատարծ բառերի մեծ մասը ածական է:

Նոր բառարաններում ընդգրկվածները հետևյալ բառերն են, որոնք միայն ածական են դիտվել՝ անկախ նրանց շարահյուսական գործառույթից. այսպես՝ *անարեւ, անգուման (անգյուման), անժաժ (անշարժ), անխառնուրդ, անշնորհք, անպոչ, անվարտի, անվնաս, արեւանման, անփուշ, արթոյն (արթուն), արտասուալի, ափաչափ, ափսոսալի, բոբիկ, գայլապատառ, գինով, գոց, դժար (դժվար), ըղձալից, թաժա (թարմ), թափօր (թափուր), թերատ, թերախորով, թերնմաշ (կիսամաշ), թեւաթափ, լալական, լայեղ, լիալիր, խոցալից, խուրտ ու մուրտ (ջարդուփշուր), ծայրասուր (սրածայր), ծնողանման, կամկարգնաց (հզվ.) կարճայժամանակ, կիպ, կիսահիւանդ, կիսամաքուր, կիսաւեր, կուշտ, կռունձ (ոտաբոբիկ), հեզաշարժ, մանտրտիկ (մանր), մառախլաղատ (մառախլապատ), մարմնաչարչար, մթվին (խրթին), միացեղ (միատեսակ), մշինջենաւո (հարատն), շնաստակ/շանսատակ/շողհար*

² Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր առաջին, Երևան, 1969, հատոր երկրորդ, Երևան, 1972, հատոր երրորդ, Երևան, 1974, հատոր չորրորդ, Երևան, 1980 և Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

(արևահար), չորեքօրյա, պէվախտ (անպատեհ), սակաւարան, սպրկիկ, ցրտասառոյց (ցրտից սառած):

Միայն մակբայ՝ *ժրայէս, հանգիտայէս* (հանգիտաբար, հնց.)
յանդգնական (հանդուգն):

Ածական մակբայ՝ *լիքը, խոյոռ, ծվէն ծվէն, կսկծագին, հանդարտ, հեծածագին, դորդ* (շիտակ), *մանէման* (զալարուն), *մենական* (մենակ), *միաշաք* (հավասարաչափ), *մուֆթա, շիտակ, ուժընդակ* (ուժգին), *ուղեղ* (ուղիղ), *ուղուրդ* (ուղիղ), *պաղատագին, պարապար* (հավասար), *սրտով, տքուն* (անքուն):

Բառարանների հեղինակները տարբեր ժողովուրդների լեզուների անվանումները երեք խոսքի մաս են համարել՝ գոյական-ածական-մակբայ կամ մակբայ – գոյական – ածական, /նայած թէ շարահյուսական ի՛նչ պաշտոն են կատարում. *արայերէն, թուրքերէն, իլախերէն* (լեհերէն), *հոռներէն* (հունարէն), *ուղուր* (ուլղուրերէն), *տաճկերէն, փարսի* (պարսկերէն):

Չի փոխանցվել՝ *ագոխախառն, աղծրի, անասպար, անբէկար, անգինի, անգոտի, անյրայէս, անխանձ, անկահ, անհալ* (անմարս), *անհամիմաղ* (անվիճելի), *անձէթ, անձրելվիհար, անմախաղ, անշնորիք, անչուան, անպապ, անպարոն, անսլեհ, անվաշխ, անտիաթիկ* (անկտակ), *անփալան, անփետուր, սպամորթ, սպլահ* (հիմար), *աստղակաճառ* (աստղալից), *բաղնէլուայ, բլրակերպ, գնդդուկ, գօտելոյծ, դրուցահայեաց* (դէպի դուրս նայող), *թամիզ, թարախխառն, թարպեղ* (համեմատ), *թախլակ* (շրջված), *թերակ* (թերի), *թերնմաշ, թխած* (կարոտ), *ի լման* (լրիվ), *իմաստնաձէւ, ի փակման, ի քաշ* (կախ), *լալական* (լալագին), *լալի* (ողբագին), *լուսահոսան* (լույսի հման հոսող), *խազ խազ, խոստաւ* (անոթի), *խորու, խորուկ, խոուագոյն* (խոռվահույզ), *խուրտ ու մուրտ, խօշ* (լավ), *կամատք/կամաթք* (միատեսակ), *կողմաւոր, կցիկ* (կցված), *հարիւրապարգէւ, հորվցնոր* (մտահոգ), *ձագախառնեալ, ձագուձու* (ցաքուցիք), *ձիապուր* (ձիով ազատված), *դէղան* (հանգիստ), *միադէհ* (մեկ կողմից), *ճէղք ճէղք, մարգարտօրէն, միադէհ, մովէտաբար, յամերամս* (երկար տարիներ), *շախ շախ* (ճյուղ-ճյուղ), *շերտ ու փերթ* (կտրոված), *շող շող* (տաք-տաք), *որաղ որաղ* (թերթ թերթ), *ուժովկէկ, չարածաղիկ, չարաման, պէն ու պէն, պէումէտ* (անհույս), *սալար* (ամբողջ), *սմբակած* (կոխտոված), *վտակօրէն* (վտականման), *տակ տակ/տակտակ* (արմատներով), *տրաբան* (անդեպ), *ցեղուցեղ* (բազմատեսակ), *ցեղք ի ցեղաց* (տեսակ-տեսակ), *փնտոր* (խառնակ), *քրմնհան* (բերանկապը հանած), *քիթ* (զերծ):

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան	Արդի հայերենի բացատրական բառարան
աժան (էժան) – մակբայ	աձական
անաղերս (հնց) -մակբայ	–
–	անգուպար (առանց կովի) – աձական
անկամայ – մակբայ	աձական/մակբայ
անմազ – աձական	–
անպատան – աձական/մակբայ	աձական
անսին – աձական	–
անվճիռ – աձական/մակբայ	աձական
անվրիպակ (անվրեպ) – աձական/մակբայ	աձական
անտէր – աձական/մակբայ	աձական
ափաշկարա – մակբայ	աձական/մակբայ
–	բարձրարագուկ – աձական
–	բարձրառաստաղ – աձական
–	երակաձէ – աձական
զարհուրագին – մակբայ/աձական	աձական
թամամ(բրբ.) – աձական/մակբայ	աձական
խափանհերկ – գոյական	–
(խոպան) – գոյական/աձական	–
ծամակտուր – աձական/գոյական	–
ծանդր/ծանտր – աձական/մակբայ	աձական
ծուռումուռ-աձական	աձական/մակբայ
կուպղ (կողպէք) – գոյական	–
կպրատեսակ (կպրանման հնց.) – աձական	–
հակառ – աձական/մակբայ	միայն՝ հակառակ կանգնել
–	հառաչագին – աձական/մակբայ
հաւաք (ամփոփ) – աձական/մակբայ	աձական/գոյական
հաւսար (հավասար) աձական/մակբայ	աձական – (գնվրկն)
–	հեզուկ – աձական
–	ճենճերալի – աձական
մերկիկ (մերկ) – աձական	աձական/մակբայ

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան	Արդի հայերենի բացատրական բառարան
միագումար – գոյական/ածական	գոյական
մոխրաթուալ – ածական/մակբայ	ածական
–	մորուսխառն – ածական
յեմ(ուշ) – մակբայ	ածական/մակբայ
շիթ շիթ (կաթիձալ-կաթիլ) – մակբայ	–
ողորմուկ (ողորմելի) – ածական	ածական/մակբայ
ուժով – ածական/մակբայ	ածական
ուշաթափ – ածական/մակբայ	ածական
չորստանի – գոյական/ածական	ածական
պալաշ (ձրի) – ածական/մակբայ	ածական
պատրաստիկ (պատրաստ) – ածական/մակբայ	ածական
պարզերես – ածական/մակբայ	ածական
–	սուտումուտ – ածական
ստոյք/ստուգ (ստույգ) – ածական/մակբայ	ածական
սրախոց (հզվ.) – ածական/մակբայ	–
փաք (փակ) – գոյական/ածական	գոյական/ածական
քաղցած – ածական/գոյական	ածական/գոյական
քաղցրագին – ածական	ածական/մակբայ
քամ (քիչ)-քիչ – ածական	–
քչիկ (մի քիչ) – ածական/մակբայ	ածական
օձանման – ածական/մակբայ	ածական

Գևորգ Ջահուկյանը «Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը» հոդվածում գրում է. ««Լիիմաստ բառային միավորներից վեցը ավանդաբար հայտնի են որպես մակբայ (արագ), բայ (շարժվեր), դերանուն (տվյալ դեպքում՝ դերանվանական որոշիչ կամ, ինչպես ավանդաբար ասվում է, «դերանվանական ածական»՝ այս), թվական (տվյալ դեպքում՝ թվականական որոշիչ կամ ինչպես ընդունված է ասել, թվականական ածական՝ երկու), ածական (մեծ) և գոյական (քաղաքները), յոթերորդը (շատ), որ հանդես է գալիս որպես մեծ բառի լրացում, հետագոտողների կողմից սովորաբար չի առանձնացվում որպես հատուկ խոսքի մաս, այլ միավորվում է մակբայի հետ որպես վերջինիս տարատե-

ասկ: Ինչպե՞ս վարվել: Այս հարցը լուծելու համար պետք է նկատի առնել նախ գոյականի ու բայի փոխհարաբերության բնույթը և երկրորդ կաղապարում դրանց ստորադասվող բառային միավորների (մակբայի, թվականի, ածականի և լրացումների փոխհարաբերությունը միմյանց և բուն մակբայների նկատմամբ):³

Այստեղից հետևություն, քանի որ բառերը մշտապես գտնվում են խոսքիմասային փոխանցումների գործընթացում, ուստի որևէ շրջանում հնարավոր չէ ստույգ ցանազանել ածականը մակբայից, հետևաբար մակբայի գործառույթով հանդես եկած ածականը համարնք ածականական մակբայ, որոշչի պաշտոնում հանդես եկած մակբայը՝ ածականական մակբայ:

Գրականություն

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
2. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր առաջին, Երևան, 1969, հատոր երկրորդ, Երևան, 1972, հատոր երրորդ, Երևան, 1974, հատոր չորրորդ, Երևան, 1980:
3. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, հ. 1, Երևան, 1987:
4. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, հ. 2, Երևան, 1992:
5. Զահուկյան Գ., Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1976, էջ 19-20:
6. Alexander L., Longman English Grammar, 1996.
7. Baugh A. C. and Cable T., A History of the English Language, London, 1978.
8. Galstyan A., Paronyan Sh., Historical development of English, Yerevan, 2013.
9. Thomson A. J., Martinet A.V., A Practical English Grammar, Oxford University Press, 1988.

³ Գ. Զահուկյան, Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1976, էջ 19-20:

Адъективация и адвербализация в армянском и английском языках

Тереза Шахвердян

Манана Далалян

Резюме

Ключевые слова: средневековый армянский язык, инфлексия, части речи обозначающие признак предмета, перемещение частей речи, сходства, различия, адвербальное прилагательное, адъективное наречие

Имя прилагательное обозначает качество, свойство или принадлежность, наречие обозначает признак действия, качества, другого признака, их главное отличие состоит во флективности. Другие части речи, обозначающее качество, могут перейти из одной части речи в другую – происходит адъективация или адвербализация. Это явление свойственно и армянскому и английскому языкам. Так как слова всегда находятся в частиречном чередовании, невозможно дифференцировать имя прилагательное от наречия в разных этапах развития языка. Следовательно имя прилагательное в функции наречия будем считать и наречие как дополнение – адъективацией наречия.

Adjectivization and Adverbializaion in Armenian and English

Tereza Shahverdyan

Manana Dalalyan

Summary

Key words: middle Armenian, inflection, property denoting parts of speech, part of speech transference, similarities, divergences, adverbialized adjective, adjectivized adverb

Adjective and Adverb denote property, the main difference between them is of inflectional character. Other parts of speech denoting property can make a part of speech transformation, where adjectivization and adverbialization can be observed. This phenomenon is typical of Armenian and English. As words often are in the process of part of speech changeability, it is impossible to distinctly differentiate adjective from adverb in any historical period of language development. Consequently we consider adjective functioning as adverb as adjectivised adverbs as well as adverb in the function of attribute – adjectivised adverb.

Ներկայացվել է 23.05.2021 թ.

Գրախոսվել է 30.05.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.